տանէն, համարձակ շրջէին: Քանզի այս էր հրաման. արա՛ զինչ և կամիս, բայց միայն զոք մի՛ ծեծեր, մի՛ կռուիր, մի՛ գողանայր. մէկին ըզգին մի դպչիր: Զի թէ ոք յանցանէր, ոչ գոյր քննութիւն. այլ կամ անդէն սպանանէին բրօք. և կամ տարեալ խեղդէին:... Շինեցին զայնպիսի խէեալի փէնէոս, յորս ի պտտիլ փէնէռին, երևէին ձկունքն ելևէջս առնել, և իբր տալմիչ ըլլալ և ելլել: Այնպէս և զայլ բազում զարմանալի իրս արարին...: Դեսպանքն զարդարեցին զիւրեանց ապարանսն անթիւ կանթեղօք, և չամամթաթէլլիով և հետաքրքրական իրօք: Ֆռանսըզ սռայրին փէնէռն փռնկեցաւ և յետոյ շինեցին նորոգ. և էր մեծ բոլորակ զարմանալի չէնք. կանգնեցուցեալ ի վերայ դրան և պատէր ինքնին:

Արդ՝ ի բաց թողեալ զայլսն, գրեցից և զայս. զի ոչ թողուին ննջել ժողովրդեանն. և եթէ ոք ննջէր ի խանութն, յայնժամ զըռզօփքն զային հասանէին ի վերայ նորա. մինն ունէր ի ձեռս իւր փեօստէքի և չուպուխ. և յանկարծակի չուպուխով հարկանէր զփեօստէքին, և միւսն աղաղակէր՝ ամա՜ն, ամա՜ն. և ննջօղքն զարհուրեալ յառնէին: Ոմանք զըռզօփք երկայն պօռույով կանչէին յականջս ննջողին, և դիւահարէր ննջօղն: Թո՛ղ և զայս, զի ժողովեալ բազմութիւն տաճիկ պատանեկաց՝ զննջօղսն առեալ դնէին ի վերայ երկայն վերտիվէնի, և բարձրացուցեալ շրջեցուցանէին ընդ փողոցս, և որք զկնի երթային աղաղակէին մեծաձայն: Եւ ննջօղն զարթուցեալ դիւահարէր. և ոմանք ի ննջողացն՝ ծանրացեալ ի քնոյ՝ հազիւ ուրեմն զարթնուին. մինչև զոմանս շրջեցուցանէին և տանէին զրեթէ ի փիացայէն մինչև ի ռիալթօն: Քանզի բազումք ի բազում աւուրս ոչ երբէք ի քուն մտեալ, ոչ զարթնուին: Եւ յայսպիսի խաղս, միոյ ուրումն բեկաւ ասեն ոտքն, և ապա արգելաւ այս խաղ:...

Զկնի Ղարայ տօնանմասին, արարին տէրեա տօնանմասը, այսինքն ծովու տօնանմա յերիս գիշերս. յառաջին գիշերի արար կէօմրիւկճի պաշին. յերկրորդ գիշերի թօփճի պաշին. իսկ յերրորդ գիշերի թէրսհանայ էմինին, որ գերազանցեաց զառաջինսն: Բաց ի այլոց իրաց, ի վերջին գիշերի, պատերազմ արարին նաւք ընդ բերդի քրիստոնէից. և առին զբերդն և թրքցուցին, և այնպէս վերջացուցին զխաղսն:

Ի յայսմ տէրեա տօնանմասին, հասարակաբար երեք սալ էին. ի մինն բովանդակ կանթեղք, չարեալք կամ ըստ ձևոյ բերդի կամ ճամիի և կամ գիր գրեալ. (որպէս և յամենայն գիշերի ի սառայ պուռնին, ի թօփղանան և այլուր, չարժէին զկանթեղս զանազան ձևով. երբեմն գիր, զօր մաշալլահ կամ էրհէմտուլուլլահ. երբեմն չէքտիրի. երբեմն քեօշք. երբեմն ըռոլանըլըճ դայեխը. երբեմն դալիօն եւն) ի յերկրորդ և յերրորդ և յերրորդ սալն առնէին զզանազան իրքն փչէնկօք: Յանկարծակի ի խաւարի լոյս ծագէր. և իբրև զարեգակն լուսաւորէ՛ր և տևէր իբրև զկէս չէյրէկ. և ապա խաղային այծք և խոզք և փէչլիվանք և ճամպազք. ամենեքեան շինեալք յօխլաէ և ի փռէնկէ: Երբեմն ի փչէնկէ կազմիւր լոյս բրգաձև: Երբեմն օձապտոյտ շրջէր բոլորակ փչանկն իբր Ի և կամ Ծ անգամ: Ի վերջին գիշերի բերին զփոքրիկ դալիօնս երիս, և զփոքրիկ չէքտիրիս, և չէքէլէվայս. և որպէս գրեցի ի վերոյ, արարին մարտ պատերազմի ընդ բերդին, որ էր ի վերայ սալլի. և որք ի բերդին էին, զգեցեալ էին փռէնկի զգեստ. և ի վերայ դրօշակի՛ խաչ: Զկնի մարտնչելոյն, ի դալիօնից թօթափեցան ի բերդն, և փոխեցին զդրօշակն, և կարգացին ըստ օրինաց իւրեանց: Եւ վերջացաւ խաղն և տօնանման: Հաւայ փչէնկիք իբրև զփունջ ելանէին և թօթափէին կանթեղակերպք: Յաւուրս տօնանմային, յապարանս ալքունի, յարտաքին սրահին, զօրմով կախեալ էին զմեծամեծ հայելիս մեծագինս, և զզրահս ի հին թագաւորաց մնացեալ: Եդեալ էին զմորթ ընձուղտ կենդանւոյն, լցեալ զմորթն այլ ինչ նիւթով: Թաթք նորա փտեալ էին: Նման ամենևին ընձուղտ կենդանւոյն պատկերին որ ի համաստեղութեան: Թագաւորն հանապազ ծպտեալ շրջէր: Եւ զարմանք է, զի վառէին ընդ ամենայն քաղաքն և ընդ ամենայն գիւղս, անթիւ և անհամար կանթեղք. բայց ձէթն աժան էր քան թէ յառաջ քան զտօնանման: Զկնի տօնանմային զտաւ զանձ երկուստէք, մինն ի (վէզիր) դանն, և էր ուրումն ագահ և անորդի տաճկի՝ անուն նորա ալի էֆէնտի. և ել իբր եօթն քիւփ փայլուն ոսկի: Միւսն ի վլանկայ ի տան՝ հալէպ քափու քեահեասըին. և ել սնտկներով ոսկի: